

Արշակ Ֆեթվաճեան: Աշխատասիրութեամբ Լ. Բ. Չուգաս- զեանի, «Հայ արուեստի վարպետներ եւ գանձեր» / 1 , Եր, «Փրինթինֆո», 2011, 188 էջ*:

«Փրինթինֆո» հրատարակչությունը 2011 թ. լույս է ընծայել արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լևոն Չուգասյանի «Արշակ Ֆեթվաճեան» գիրքը:

Աշխատության հիմնական նպատակն է լուսաբանել մեծ արվեստագետի մոռացության մատնված գեղագիտական ժառանգությունը և ցույց տալ Ֆեթվաճյանի նշանակալից դերը հայ գեղանկարչության, որոշ չափով նաև՝ արվեստագիտության զարգացման ասպարեզում: Մենագրությունը Լ. Չուգասյանի շուրջ երեք տասնամյակ տևած մանրամասն հետազոտությունների արդյունքն ու հանրագումարն է: Դրա վկայությունն են ութսունական թվականներից Ֆեթվաճյանի ստեղծագործություններին նվիրված նրա հոդվածները, որոնք լույս են տեսել հայկական, նաև գերմանական հանրագիտարաններում, «Սովետական Հայաստան», «Էջմիածին» և այլ պարբերականներում: Ֆեթվաճյանի աշխատանքների մասին այս հետազոտությունների շարքը լրացնելու է գալիս գրախոսվող մենագրությունը:

Լ. Չուգասյանը սրանով հիմք է դնում նաև «Հայ արվեստի վարպետներ և գանձեր» մատենաշարին, որը նոր երևույթ է հայ արվեստագիտության ասպարեզում: Նման մատենաշարի հայտնվելը վաղուց էր զգացվում մեր իրականության մեջ:

Լ. Չուգասյանի մենագրության լույս ընծայումը համընկել է Ֆեթվաճյանի ծննդյան 145-ամյա հոբելյանին և յուրահատուկ հարգանքի տուրք է մեծ արվեստագետին ու նրա կերտած հոյակապ ստեղծագործություններին: Ուստի՝ ինչպես հեղինակն է նշում. «Այս գիրքը հազվագյուտ հնարավորություն է տալիս որոշ իմաստով ի մի բերելու նրա ծավալուն ստեղծագործության որոշ կողմերը»¹:

Սովորածավալ մենագրությունը բաղկացած է երախտագիտության խոսքից, գրքի հրատարակմանն աջակցած նվիրատուների անվանացանկերից, ներածականից, Արշակ Ֆեթվաճյանի արվեստը ներկայացնող գլխից, նկարչին վերաբերող մատենագիտության բաժնից և ցանկերից, որոնց մեջ է ներառված անձնանունների, տեղանունների, ճարտարապետական կոթողների, նկարների և լուսանկարների ամբողջությունը:

Նախաբանում Լ. Չուգասյանը Ֆեթվաճյանին ներկայացնում է որպես միջազգային հնչեղություն ունեցող վարպետի, կարևոր ցուցահանդեսների մասնակ-

*Ընդունվել է տպագրության 29.02.2012:

¹ Արշակ Ֆեթվաճեան: Աշխատասիրութեամբ Լ. Բ. Չուգասյանի, «Հայ արուեստի վարպետներ եւ գանձեր» / 1 , Եր, «Փրինթինֆո», 2011, էջ 11:

ցի: Մեծանուն գեղանկարչի ստեղծագործություններն արժանացել են բարձր գնահատականների, հիշատակվել զանազան լեզուներով հրատարակված գրքերում ու հոդվածներում: Մատնանշվում են նաև այն հիմնական օրինաչափությունները, որոնցով զարգացել է գեղանկարչի արվեստը: Այդ նպատակով հեղինակն ավելի մանրամասն է դիտարկում Ֆեթվաճյանի անձը և գործը. նա ծնվել է Տրապիզոնում 1866 թվականին, սովորել Թուրքիայում և Իտալիայում, ապրել Ավստրիայում, Ռուսաստանում, Կովկասում, Միացյալ Նահանգներում:

Մեծ հետաքրքրությամբ է ընթերցվում «Արշակ Ֆեթվաճեանի արուեստը» գլուխը: Ուշագրավ է մանավանդ Սուրբ Դավաթ կղզում Մխիթարյան միաբանության անդամ, նշանավոր հայագետ Դևոնդ Ալիշանի հետ արվեստագետի ծանոթության և նույն միաբանության Մատենադարանում հայկական հին գրչագիր մատյանների նրա ձևավորումների, ուսումնասիրությունների և ընդօրինակումների պատմությունը: Ֆեթվաճյանն ընդօրինակումներ է արել միջնադարյան նշանավոր մանրանկարիչներ Իգնատիոս Հոռոմոսցու, Պիժակի, Ավագի, Թորոս Տարոնացու և այլ վարպետների ձևավորած մատյանների պատկերներից, որոնք հետագայում հայտնվել են Գ. Ալիշանի «Հայապատում» և «Միսական» խորագրերը կրող աշխատություններում:

Լ. Չուգասզյանը կարևորել է նաև ուսումնառության շրջանում Ֆեթվաճյանի վրձնած «Անհայտ անձի դիմանկար», «Տղայի գլուխ», «Տղամարդու դիմանկար», «Կնոջ դիմանկար» և իտալական մատիտով գծված՝ «Հերարձակ աղջկայ դիմանկար» անվանումները կրող պատկերները, որոնք ժամանակին դուրս են մնացել քննադատների տեսադաշտից:

Աշխատության մեջ հանգամանորեն շարադրված է նաև նկարչի հայագիտական՝ հնագիտական ու ազգագրական գործունեությունը, մասնավորապես նրա ճամփորդությունը դեպի Հյուսիսային Հայաստան: Ֆեթվաճյանի այդ տարիների գործունեության մեջ ընդգծվում է առաջին ճամփորդությունը դեպի Անի անվանի պատմաբան Լեոյի հետ, 1901 թվականին և 1917 թ. նրա վերջին, դարձյալ Անի կատարած ուղևորությունը հայ մշակույթի մեծ երախտավոր Գարեգին Հովսեփյանի, նկարիչ Վրթանես Ախիկյանի և լեզվաբան Գրիգոր Բախանյանի հետ: 1900-ական թվականներից Ֆեթվաճյանի կողմից ջրաներկով ու մատիտով թղթին են հանձնվել հայկական եկեղեցիների, բերդերի, պարիսպների, քաղաքացիական շենքերի, զանազան գավառների հայուհիների զգեստների պատկերները:

Անին ու հարևան շրջանները ներկայացնող ճարտարապետական կոթողների և ազգագրական պատկերների ստեղծման պատմությանը զուգընթաց, հեղինակն անդրադարձել է նաև Ֆեթվաճյանի վրձնած ռուս բարձրաշխարհիկ հասարակության, մասնավորապես ազնվատոհմիկ խավի ռուս բնորդուհիների դիմանկարներին: Լ. Չուգասզյանի կողմից քննվում են գերագույն վարպետությամբ ջրաներկով ստեղծված այդ հիասքանչ պատկերները՝ «Բոյարի աղջիկը», «Գլխարկով կնոջ դիմանկարը» կամ «Օրիորդ Պոնսի դիմանկարը»: Առանձին՝ առավել կարևոր պատկերներ համեմատվում են համաշխարհային արվեստի նույնօրինակ ստեղծագործությունների հետ, բացահայտվում դրանց որոշակի առնչությունները: Ստեղծագործությունների գեղարվեստական արժեքը գնահատելիս հեղինակը հարազատություն է տեսնում այս շրջանի ռուսական և եվրոպական գեղանկարչական աշխատանքների հետ: Նման մոտեցումը թույլ է տալիս համեմատաբար լրիվ պատկերացնել քննվող ստեղծագործությունների գեղար-

վեստական միջավայրը դարաշրջանի ընդհանուր մշակութային իրականության մեջ: Քանզի եվրոպական գեղարվեստական անցյալի և իր ժամանակի հրաշալկերսոների գեղեցկության գաղտնիքների մեջ խորամուխ եղած ու դրանք յուրացրած Ֆեթվաճյանը քայլ առ քայլ հաղորդակից է դարձել նաև ռուսական մշակույթի հոգևոր մթնոլորտին, որը նույնպես իր բարեբեր ազդեցությունն է թողել նկարչի արվեստի վրա:

Ուշագրավ է, որ հեղինակն անդրադառնալով հայ ճարտարապետության մանրամասն բնութագրումներին ու նկարագրություններին, բացահայտում ու կարևորում է այդ ճարտարապետական կառույցների բարեշինության գործում Ֆեթվաճյանի կատարած դերը՝ տարբեր տարիներին նրան հանձնարարված կամ պատվիրված բարեգարդումները: Այս առումով նշանակալից է Ֆեթվաճյանի ներդրումը Արմավիրի (այժմ՝ ՌԴ Կրասնոդարի երկրամասում) Սուրբ Գևորգ, Կարսի Սուրբ Խաչ, Թիֆլիսի Քամոյենց Սուրբ Գևորգ և Կուսանաց անապատի Սուրբ Ստեփանոս եկեղեցիների բարեշինության գործում, որոնց խորանների համար նա վրձնել է «Աստվածամայրը և Մանուկ Քրիստոսը» պատկերները և կերտել եկեղեցիների քանդակագործական հատվածները:

Լ. Չուգասզյանն անդրադառնում է նաև հայ արվեստի, ճարտարապետության, մշակույթի հրատապ հարցերին նվիրված նկարչի գիտական և հրապարակախոսական հոդվածներին: Այդ խնդիրներն առնչվում են Էջմիածնի Մայր Տաճարի ճարտարապետական հուշարձաններին վերաբերող Ֆեթվաճյանի ձեռնարկումների, ինչպես նաև Թիֆլիսի հայկական լրագրերում նրա բազմաթիվ թղթակցությունների հետ: Վերջիններիս մեծ մասը նվիրված է եղել հայկական միջավայրում գեղագիտական դաստիարակության պակասին, կերպարվեստի երկերի մասսայականացման անբավարար վիճակին:

Մենագրության մեջ գնահատելի է նաև Ֆեթվաճյանի այն ստեղծագործությունների հիշատակությունը, որոնց գտնվելու վայրն առայժմ հայտնի չէ: Մասնավորապես հեղինակը կարևորում է Հայաստանի ազգային պատկերասրահի Ֆեթվաճյանի անձնական արխիվում պահվող՝ 1941 թվականին իր իսկ ձեռքով կազմված սեփական երկերի անգլերեն ցանկը: Այն իրազեկում է տարբեր տարիներին Բաթումում, Թիֆլիսում, Ալեքսանդրիայում, Վիեննայում և Մոսկվայում Ֆեթվաճյանի ստեղծած, վաճառած կամ նվիրած ստեղծագործությունների մասին: Այդ աշխատանքների ճակատագիրն ու գտնվելու վայրն առայժմ հայտնի չէ: Հարկ ենք համարում հատկապես առանձնացնել 1897 թ. ջրաներկով կատարած նրա երեք նկարները, որոնք գնել է Բաքվի հայտնի նավթարդյունաբերող Պ. Դուկասովը: Ցավոք, դրանց ճակատագիրը ևս մինչ օրս հայտնի չէ:

Մենագրության մեջ կարևորվում է նաև հայ ժողովրդի համար ճակատագրական 1918 թվականին Ֆեթվաճյանի ծավալած գործունեությունը: Էջմիածնում նա նկարել է արևմտահայ գաղթականության ազգագրական տիպերն ու տարազները, շուրջ տասնութ ամիս աշխատել զարհուրելի պայմաններում՝ ակնատես լինելով փողոցներում մեռնող հայրենակիցների մղձավանջային վիճակին: Ուշագրավ է հեղինակի հետևյալ դիտարկումը. «Արևմտահայ գաղթական կանանց նա, ամենայն հավանականությամբ, սկզբից լուսանկարում էր և հետո այդ լուսանկարների հիման վրա ստեղծում գունավոր պատկերները: Դա թերևս միակ միջոցն էր այդ աշխատանքը կատարելու, քանի որ նահապետական կեանքով ապրած, ամաչկոտ և քաշուող հայ կանանց դժուար կլինէր համոզել ստանձնելու

ԳՐԱՆՈՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ (Գ) Գրքի, թիվ 2 (38) ապրիլ-հունիս, 2012

ՎԵՐ համահայկական հանդես

բնորոշուի ու դերը»²:

Ֆեթվաճյանի 1918 թ. գեղարվեստական կենսագրության մեջ Լ. Չուգասյանի կողմից մեծապես կարևորվում է նաև նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի հանձնարարությամբ իրականացված հայկական նամակադրոշմների ու առաջին թղթադրամների ձևավորման գործը:

Հետաքրքրությամբ են ընթերցվում մենագրության այն հատվածները, որոնք նվիրված են Ֆեթվաճյանի անհատական ցուցահանդեսներին: Մեծ կարևորություն էին ներկայացնում հատկապես 1920 թ. ապրիլին Լուվրի Դեկորատիվ Արվեստների թանգարանի Մարսանի տաղավարում, իսկ 1921 թ. նոյեմբերին՝ Լոնդոնի հռչակավոր Վիկտորիա և Ալբերտ թանգարանում Ֆեթվաճյանի հայրենագիտական նկարների ցուցահանդեսները: Մինչ այդ, անգամ առաջօր դեռևս որևէ այլ հայ նկարիչ վերոհիշյալ թանգարաններում ցուցադրվելու պատվի չի արժանացել: Այդ ցուցադրություններին հաջորդել են նաև արվեստագետի 1922 և 1923 թթ. նկարահանդեսները Միացյալ Նահանգներում, մասնավորապես Կոլումբիայի համալսարանի գրադարանում, Չիկագոյի, Փրինսթոնի, և Հարվարդի համալսարաններում, Նյու-Յորքի Ճարտարապետների միության տարեկան պատկերահանդեսում:

Գրքի հայերեն լեզվով հատվածն ավարտվում է Ֆեթվաճյանի՝ Բոստոնում ծավալված գործունեությամբ, որտեղ նկարիչն անցկացրել է իր կյանքի վերջին քսանհինգ տարիները՝ առանձնացած ու նվիրված նկարչական աշխատանքներին, գիտական ուսումնասիրություններին: Այս շրջանում Ֆեթվաճյանի հրատարակված հետազոտություններից հիշարժան են հայ մանրանկարչությանը և Անահիտ դիցուհու արձանագլխին վերաբերող հոդվածները: Հեղինակը ցավով է նշում, որ «Բոստոնի տարիներին նրա գրած հայ և համաշխարհային պատմության մասին իր անտիպ ծավալուն աշխատությունները հայերեն, ֆրանսերեն ու անգլերեն լեզուներով, որոնք այսօր պահվում են նրա արխիվում, հազվադեպ են թերթվել մասնագետների կողմից ու մնացել անհայտ հայ հանրությանը: Դրանք, ավաղ, մոռացվել են, ինչպես որ մոռացվել է ինքը՝ Ա. Ֆեթվաճեանը»³:

Հիրավի, հայագիտության համար պատկառելի ուսումնասիրություն է 188 էջից և 123 նկարներից բաղկացած Լ. Չուգասյանի մենագրությունը, որի հաջորդությունը կանխորոշված է նաև հեղինակի կողմից հեռատեսքերն ընտրված ու գրքի մեջ տպագրված արվեստի ստեղծագործություններով: Առաջին անգամ լույս աշխարհ են հանվում Ֆեթվաճյանի՝ արվեստագիտական շրջանակներում շատերին անհայտ այն ստեղծագործությունները, որոնք պահվում են Երևանի, Լոս-Անջելեսի, Թբիլիսիի մասնավոր հավաքածուներում, Հայաստանի Ազգային պատերասրահում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հավաքածուում, Վենետիկի Ս. Ղազար կղզու Մխիթարյան միաբանության թանգարանում, Բոստոնի «Հայրենիքի» խմբագրությունում և այլուր:

Այս գրքով, փաստորեն, մեր առջև բացվում է գեղարվեստական սրանչելիքներով հարուստ մի աշխարհ: Հայտնի են դառնում Ֆեթվաճյան մտավորականի ստեղծագործական ուղու ժամանակագրական շղթայի բազմաթիվ անհայտ հանգրվանները: Լ. Չուգասյանը մեզ հնարավորություն է ընձեռում հիանալ աշխարհի տարբեր անկյունների մասնավոր հավաքածուներում գտնվող նրա

² Նույն տեղում, էջ 86:

³ Նույն տեղում, էջ 107:

ստեղծագործություններով:

Մենագրությունն ունի հույժ արդիական հնչեղություն: Նրա եռալեզու լինելը հնարավորություն է տալիս մեծ արվեստագետի գեղարվեստական ժառանգությունը տարածել զանազան երկներում՝ արվեստի սիրահարների և մասնագետների միջավայրում:

Գեղարվեստական բացառիկ ճաշակով հրատարակված այս հատրի բարձր որակը Ֆեթվաճյանի արվեստը հայ և օտար ընթերցողին է մատուցում հրատարակչական միջազգային չափանիշներին համապատասխան: Սա անմախընթաց երևույթ է մինչ օրս Հայաստանում տպագրված՝ հայ արվեստին նվիրված հրատարակությունների շարքում:


Շուշանիկ Գ. Չոհրաբյան

Shushanik G. Zohrabyan,-Arshak Fetvajyan: “The Masters and Treasures of Armenian Art I”, compiled by L.B. Jugaszyan, Yerevan, “Printinfo,” 2011, 188 pages.

ԳՐԱԽՈՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դ (Ժ) քաղի, թիվ 2 (38) ասպիւ-հունիս, 2012

ՎԷՄ համահայկական հանդես



Արշակ Ֆեթվաճյան, Ռոստոմի դիմանկարը